

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

07.11.2013 թ.

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 84-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարսեղյանը:

Օրակարգում՝

1. 2013 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտների կատարման ընթացքի մասին:
/Զեկ. Յու. Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետի ժ/պ/
2. ՀՀ ոստիկանության պետական ռեգիստրում հաշվառված մարզի համայնքների բնակչության թվաքանակի ճշգրտման աշխատանքների մասին:
/Զեկ. Յու. Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետի ժ/պ/
3. Մարզի համայնքներում 2013 թվականի վարչական վերահսկողություն իրականացնելու արդյունքների մասին:
/Զեկ. Ի. Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի
ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

- | | |
|---------------|------------------------------|
| Ռ. Ղուկասյանը | - Սևանի քաղաքապետ |
| Յու. Ավայանը | - Ճամբարակի քաղաքապետ |
| Մ. Վարդանյանը | - Գեղամավան համայնքի ղեկավար |
| Գ. Բայանը | - Վահան համայնքի ղեկավար |

Հայտարարություններով հանդես եկան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Իլլաթյանը, քաղաքաշինության վարչության պետ Դ. Հովհաննիսյանը, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ. Հովհաննիսյանը և հողօգտագործման և հողաշինարարության բաժնի վարիչ՝ Է. Ստեփանյանը:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ և մինչև ս/թ դեկտեմբերի 1-ը ապահովել տարեկան ցուցանիշները.

2) մինչև ս/թ դեկտեմբերի 25-ը ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետական ռեգիստրի հետ համատեղ կատարել ճշգրտումներ համայնքների բնակչության թվաքանակի հետ կապված՝ համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկի համար.

3) մարզի համայնքներին բաշխված դիզելային վառելանյութի, ազոտական պարարտանյութի, ցորենի, գարու և այլ սերմացուների բաշխացուցակներն՝ ըստ շահառուների, քննարկել համայնքների ավագանիների նիստերում, տեղադրել համայնքների կայք էջերում և փակցնել բնակիչների համար տեսանելի վայրերում.

4) այսուհետ բացառել համայնքների վարչական վերահսկողության արդյունքում գրանցված սխալներն ու բացթողումները, տեղական ինքնակառավարման մարմիններում գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և նշված ժամկետներում.

5) կարճ ժամկետում միջոցներ ձեռնարկել փաստաթղթաշարժը էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար:

ՄԱՐԶՊԵՏ՝

 Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ